ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

«12» սեպտեմբերի 2021թ. ք. Երևան

ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովը (այսուհետ՝ Հաշվիչ հանձնաժողով) նախքան քվեատուփը բացելը,

արձանագրում է՝

1. ժողովին մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թիվը (ցուցակային թիվ). — 2352 (երկու հազար երեք հարյուր հիսուներկու) թվերով և բառերով

2. ըստ ցուցակի ստորագրությունների քվեաթերթիկ ստացողների թիվը — 1111 (մեկ հազար հարյուր տասնմեկ) թվերով և բառերով

3. չօգտագործված քվեաթերթիկների թիվը — 1319 (մեկ հազար երեք հարյուր տասնինը) թվերով և բառերով

Հաշվիչ հանձնաժողովի 06.09.2021թ. թիվ 2 որոշման համաձայն ««Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի ընտրություն» օրակարգային հարցով ըստ հաշվարկների տպագրվել և շրջանառության մեջ է դրվել 2423 (երկու հազար չորս հարյուր քսաներեք) հատ քվեաթերթիկ (2352 (երկու հազար երեք հարյուր հիսուներկու) հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 06.09.2021թ. դրությամբ, և 71 (յոթանասունմեկ) հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով):

12.09.2021թ, սույն արձանագրությունը կազմելիս պարզվեց, որ 71 (յոթանասունմեկ) հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով) լրացուցիչ քվեաթերթիկների փոխարեն տպագրվել է 78 (յոթանասունութ) հատ:

Չօգտագործված քվեաթերթիկների թվում է հաշվառվել նաև 2 (երկու) փոխարինված՝ մարված քվեաթերթիկը:

Միաժամանակ, հայտնաբերվել է 8 (ութ) խոտանված թերթիկ, որոնց վրա չկա համապատասխան տպագրությունը, սակայն առկա է կնիքը, ինչը տեխնիկական վրիպակ է, որը թույլ է տրվել հաշվարկների ժամանակ:

Քվեարկած անձանց ցուցակների հաշվարկների ժամանակ պարզվել է, որ փաստաբան Կարեն Սուրիկի Մեժլումյանը (արտոնագիր թիվ 2), 1511-րդ տողում ստորագրել է ինչպես քվեաթերթիկ ստանալիս դրա համար նախատեսված «Ստորագրությունը» հատվածում, այնպես էլ «Անձը հաստատող փաստաթուղթը» հատվածում:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ *Ապետնակ Պողոսյան*

Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար՝ *Աշոտ Խլոյան*

Անդամներ՝ *Նազիկ Մալխասյան*

Էրիկ Պետրոսյան

Սաթենիկ Զաքարյան

Հեղինե Մանուկյան

Կարինե Ղաշանգյան

Գեւորգ Գեւորգյան

Գագիկ Մայիլյան